



# ԲԱՂՄԱՎԵՊ

ԺԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 17.

1856

ՄԵՊՏԵՄԲԵՐ 1.

## ԲԱՐ Ո Յ ԱԿ ԱՆ

Չարախոսութիւն :

Սա հուր իմն է ծախիչ, որ զամենայն յոր և մերձեսցի՝ այրէ . որ զյարդն և զցորեանն ընտիր, զպիղծն և զսուրբ հաւասար խամրէ . որ ընդ ամենայն ուրեք՝ յոր վայր և երթիցէ, աւեր և կործանումն արկանէ . որ զխորս անգամ երկրի պեղէ և ընդ ծածկագունից կը ցեալ մածանի . որ յաճիւն անարդ դատէ զոր ինչ պատուական էր յաշ մեր և երեւելի . որ և մինչ թաղեանն թուիցի և մերձ՝ ի շիջանել, ահաւորագոյն ևս երեի և աղիտաքեր . և զոր սպառելն ոչ կարիցէ՝ մթացուցանէ զայն . և երեւմն ճարտար իսկ հաճոյ լինի և նշոյլս արձակէ մինչեւ վնասեալ :

Սա ինքն ամբարտաւանութիւն իմն է ծածուկ, որ զշիւղն յական եղբօրն մերոյ ցուցանէ մեզ, և զգերանն որ յաշ մեր՝ թաքուցանէ՝ ի մէնջ . վատթար նախանձ, որ ՚ի բնական ձրիցն և ՚ի յաջողուածոց ընկերին խոցեալ, դա-

տախազ լինի վնաննէ, և ջան՝ ի գործ արկանէ զորոց քան զինքն գերազանցեն զփառս մթագնել . ատելութիւն կեղծաւորեալ, որ ՚ի գեմն բանիցն իւլոց զպարուակեալն՝ ի սրտի իւրում արտայայտէ դանութիւն . անարժան կեղծաւորութիւն, որ ՚ի վերին երեսս մեծարեալ գովլէ՝ և ՚ի ծածուկ ընդ վայր հարկանէ . թեթևամտութիւն ամօթապարտ, որ ոչ անձին տիրէ և ոչ անյօդ գողգ՝ ի բանս իւր տեւել ինչ կարէ, և որ զկեանս իւր յաճախ և զանդորրութիւն՝ ի կորուստ մատնէ սակս անմիտ իմն պարաւանաց զոր հաճոյական գոլ զիտիցէ . և խուժադուժ անգթութիւն՝ որ զբացական եղբայրն հարկանէ :

Չարախոսութիւն՝ ախտ է վըրդովայոյզ, որ զընկերութիւնն վեր՝ ի վայր առնէ . որ ՚ի քաղաքս երկպառակութիւնս արկանէ . որ զանձուկ բարեկամութիւնս լուծանէ . որ աղբիւր է ա-

տելութեանց և քինու . որ ազգի ազգի անկարգութեամբ և խռովութեամբ լցուցանէ յոր վայր և մուտ գտանիցէ . ընդ ամենայն ուրեք ոխերիմ թշնամի կայ խաղաղութեան և քաղցր կենաց . աղքիւր է մահաբեր թունից . որ զհեւաւորս և զմօտաւորս իւր միահաղոյն եղծեալ ապականէ . չարարուեստ են գովութիւնք նորա , դրուատիք նորա ժանտ , լրութիւն նորա անօրէն . 'ի դէմն , 'ի շարժմունս և 'ի հայեցուածս համօրէն թոյն իմն բերէ , զոր ըստ իւրումն բուսոյ բնութեանն հեղեալ ծաւալէ :

### ՄԱՍԻԼԻՈՒ

### ԱԶԳԱՑԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

#### Ազգն և բարոյական մարդ<sup>1</sup>:

Ինչպէս որ ըսինք , ազգին պայծառութեանը արգելք ընող գլխաւոր ծուռ գաղափարներուն մէկն ալ է՝ իւրաքանչիւր անձին իրեն պատշաճէն դուրս գործոց ձեռք զարնելը՝ չանչնալով ինքն իրեն որ անդամն ըլլալը ազգին : Ինչպէս թէ ըսենք՝ մարդու մը աչքը իր տեսնելու պաշտօնը թողու ու լսելու աշխատի . ականջն ալ տեսնել ուզէ . քիթն ու տելու զբաղի , բերանը հոտութալու . ձեռուներով քայլելու ջանայ , ոտուրներով իր վրան գլուխիր շոկէ . ստամուր մտածելու հետ ըլլայ , գլուխը կերակուրները մէջը ժողված մարսել ուզէ . և այլ այսպիսի խառնավինդոր գործքերու ձեռք զարնող անդամներով մարդ մը ինչ տեսակ ձիւաղ կը դառնայ . և միթէ կրնայ ապրիլ և օրուան մը կեանք ունենալ : Հապա ազգն որ նոյն բանաւորաց բազմութենէն բաղկացած , մարդուս ամէն կատարելութիւններով զարդարուած , ազնուական բարոյական մարդ է , այսպիսի շփոթ խառնակած անդամներով ինչպէս կրնայ ազգ կոչուիլ և

կենդանութիւն ունենալ , թող թէ հանգստութիւն և յաջողութիւն : Հիմա , ով բարեսէր ընթերցող , աչքդ մէյմը մեր ազգին վրայ դարձու ու տես այսպիսի խառնակ շփոթութենէ առաջ եկած ազգին վնասները : Կը տեսնես որ ազգերնիս ամէն կարեւոր անդամներն ունի , բայց աւաղ որ ամենքն ալ շփոթած՝ կամայն է որ իրենց սեպհական գործքերնին թողուցած իրարու պաշտօնն ընելու հետ են , և կամ այն է որ թէպէտ իրենք ազգին կարեւոր անդամներն են , բայց ամենւին անգործ կեցած իրենց պաշտօնն ալ չեն ըներ : Արդ ինչպէս կրնաս յուսալ բարիք մը այսպէս խառնավինդոր կերպով աշխատող ազգէ մը :

'Իփտելու արժանի է այս բանս ալ որ ուրիշ սխալ գաղափարները այնչափ աւելի կը պակսին ազգայնոց մտաց մէջէն՝ որչափ որ աւելնայ յառաջադիմութեան ջանքը . իսկ ընդհակառակն այս ազգային անդամոց իրենց պատշաճէն դուրս գործոց ձեռք զարնելու սովորութիւնը երթալով պակսելու տեղ , աւելի կը սաստկանայ՝ թէ որ առանձին մասնաւոր մտադրութիւն ըլլուի , և ազգարարութեամբ լիրատուի թէ ինչ և իցէ գործոց , ուսման և արհեստի մէջ յառաջադիմութիւն ըլլուիր , ինչուան որ ամէն ազգայինք իրենց գործոցը և արուեստին և իրենց ուսմանը մտադիր ըլլան , առանց խառնուելու իրենց չպատշաճած և իրենց կարողութենէն դուրս եղած բանին : Ա ասն զի առանց այսպիսի զգուշութեան մարդ ազգասիրութեան եռանդով վառուած՝ ջանալով աշխատելու , և զիտնալով ինչ ընելիքնին , այլ միայն ջանքերնին աւելցընելով , կը սկսին առջենին հանդիպածին վրայ մտածել՝ ու զայն իրենց կարողութենէն դուրս եղած գործքը կարգի դնելու ետևէ ըլլալ : Աւ այսպէս առանց ընտրութեան ջանքով աշխատողներուն գործքը յայսնի է որ ուրիշ վախճան չունենար՝ բայց եթէ վերի յիշած ձիւաղ դարձած մարդուն թշուառ վիճակին հասցընել զագ

<sup>1</sup> Տես հա . ԺԲ , Երես 225 , 257 : Հա . ԺԴ , Երես 69 , 133 , 213 :